

**2.**

**ԿԵՆՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**BIOLOGY**  
**БИОЛОГИЧЕСКИЕ НАУКИ**

**ԼԻՊԻԴՆԵՐԻ ԱԶԱՏ ՌԱԴԻԿԱԼԱՅԻՆ  
ԳԵՐՕԶՄԻՆԱՑՄԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԸ ՍՊԻՏԱԿ  
ԱՌՆԵՏՆԵՐԻ ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ ԼՅԱՐԴԻ  
ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՑԻՈՆԶԻ ԴԵՊՔՈՒՄ**

**Ա. Ա. ՄԻՄՈՆՅԱՆ**

*Պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ*

**Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

*Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**Լ. Ա. ՄԻՄՈՆՅԱՆ**

*Բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ*

**Ա. Տ. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

*Սագհստրամատ*

**ՀՀ ԳԱԱ Յ. ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ անվան կենսաբիմիայի ինստիտուտ  
ԳՊՀ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոն**

Լյարդի ցիռոզը խրոնիկ հիվանդություն է, որն ուղեկցվում է պարենքիմի և շարակցահյուսվածքային ստրոմայի ծանր ախտահարումով, օրգանի ֆունկցիոնալ անբավարարությամբ և այլ երևույթներով։ Ամեն տարի աշխարհում լյարդի ցիռոզից մահանում է 3 միլիոն մարդ։ Վերջին տասնամյակներում նկատվում է ցիռոզով հիվանդների քանակի զգալի աճ։ Տարեր հետազոտողների տվյալներով լյարդի ցիռոզի հաճախականությունը ազգաբնակչության մեջ կազմում է մինչև 6%։ ԱՄՆ-ում մահացությունների մեջ լյարդի ցիռոզը զբաղեցնում է իններորդ տեղը, իսկ 40-ն անց անձանց մոտ՝ չորրորդ տեղը։

Լյարդի ցիռոզի ախտաբանությունը հասկանալու, հետևաբար ավելի արդյունավետ բուժամիջոցներ օգտագործելու համար կարևոր է պարզել լյարդի ֆունկցիոնալ շեղումների մեխանիզմները, որոնք հանգեցնում են այդ ախտաբանության առաջացմանը և հետագա զարգացմանը։

Վերջին տարիներին նյութափոխանակային և կառուցվածքային վիճակների մեջ մի շարք ախտաբանությունների դեպքում զգալի դեր է հատկացվում բջջային մեմբրաններում և ենթաբջջային կառուցվածքներում լիպիդների ազատ ռա-

դիկալային գերօքսիդացման պրոցեսների ակտիվացմանը [2, 7]: Լիպիդների գերօքսիդացման (ԼԳՕ) պրոցեսը, որը ուղեկցվում է մեմբրանատոքսիկ և մեմբրանալիտիկ ազդեցության նյութերի ելքով, ժամանակակից պատկերացումներով, տարրեր բջջային գոյացություններում կարող է դրսնորվել նյութափոխանակային պրոցեսների հնչպես խթանումով, այնպես էլ ակտիվության ճնշումով: Լիպիդների գերօքսիդացման պրոցեսում առաջացող նյութերի ավելցուկային կուտակումը կարող է դառնալ բջջների նեկրոզի, դրանց մեմբրանների ֆիզիկաքիմիական հատկությունների խախտման, բջջներում իոնային ուղիների առաջացման պատճառ: Մեմբրան-կախյալ ֆերմենտների կատալիտիկ հատկությունների ԼԳՕ-կախյալ փոփոխությունները, կապված լիպիդների գերօքսիդացման հետ, պայմանավորված են մեմբրանների ֆոսֆոլիպիդային բաղադրության և վիճակի փոփոխություններով, ֆերմենտների սպիտակուցային մոլեկուլների վերափոխությամբ, սպիտակուցների ազատ ամինախմբերի և լիպիդների գերօքսիդացման արգասիքների փոխազդեցության հաշվին թիոլային խմբերի օքսիդացման հետ [6]: Այդ տեսակետից ուշադրության արժանի է առնետների արյան մեջ, ուղեղի և յարդի հյուսվածքներում  $\text{CCl}_4$ -ով մակածված ցիռոզի դեպքում լիպիդների գերօքսիդացման ինտենսիվության և այդ պրոցեսում  $\alpha$ -տոկոֆերոլի (վիտամին E) ու նատրիումի թիոսոլֆատի հակաօքսիդանտային ազդեցության ուսումնասիրությունը:

### **Յետազոտության նյութը և մեթոդները:**

Յետազոտությունների համար վերցրել ենք ոչ ցեղային սպիտակ առնետներ՝ 180-200 գրամ քաշով: Փորձարարական ցիռոզն առաջացրել ենք 20 օրվա ընթացքում, շաբաթական երկու անգամ 0.3 մլ 100գ/կենդանու զանգվածին  $\text{CCl}_4$ -ի ներորովայնային ներարկումով [4, 5]: Փորձակենդանիներին բաժանել ենք 6 խմբի:

20 օրվա ընթացքում շաբաթը 2 անգամ II, IV և VI խմբի կենդանիները ներորովայնային ներարկմամբ ստացել են 0.3 մլ  $\text{CCl}_4$ , III և IV խմբերը՝ 0.4մգ  $\alpha$ -տոկոֆերոլ յուրաքանչյուր կենդանուն, V և VI խմբերը՝ 1մլ նատրիումի թիոսոլֆատ մեկ կենդանուն, իսկ I խումբը ստացել է 1մլ ֆիզիոլոգիական լուծույթ:

Լիպիդների գերօքսիդացման պրոցեսի ինտենսիվությունը որոշվել է բարձր ջերմության պայմաններում ընթացող մալոնատղիալդեհիդի և թիոբարբիտուրային թթվի փոխազդեցության ռեակցիայով, որի դեպքում ստացվում է ներկված մալոնատղիալդեհիդի մեկ և թիոբարբիտուրային թթվի երկու մոլեկուլ պարունակող տրիմեթիլային կոմպլեքս [3]: Գերօքսիդների առաջացման պրոցեսի ինտենսիվության ուսումնասիրության համար ֆերմենտային և ոչ ֆերմենտային համակարգերում օգտագործվել են ստորև բերված խառնուրդները: Առաջին դեպքում խառնուրդը պարունակել է 0.1 մլ ուսումնասիրվող հյուսվածքի հոմոգենատ, 0.3 մլ  $12 \times 10^6$  M Սորի աղ, 0.3 մլ  $2 \times 10^4$  M պիրոֆոսֆատ, 0.3 մլ 1 mM ՆԱԴՖՀ-ի լուծույթ: Երկրորդ դեպքում խառնուրդը պարունակել է 0.1 մլ հոմոգենատ, 0.3 մլ 0.8 mM ասկորբինաթթու, 0.3 մլ 40 mM տրիս-HCl բուֆեր (pH 7.4), 0.3 մլ  $12 \times 10^6$  M Սորի աղ: Խառնուրդը շոգեբաղնիքում  $37^\circ\text{C}$ -ի պայմաններում ինկուբացվել է 30 րոպե տևողությամբ: Ռեակցիան դադարեցրել ենք ավելացնելով 0.5 մլ եռջլորբացախաթթվի 30%-ոց լուծույթ, իսկ նստվածքը հեռացնելու համար խառնուրդը ցենտրիֆուգել ենք 10 րոպե՝ 6000 պտույտ արագությամբ:

Ցենտրիֆուգելուց հետո ստացված 1 մլ վերնստվածքային հեղուկին ավելացրել ենք 0.2 մլ 0.6 M HCl-ի լուծույթ և 0.8 մլ 0.12 M թիոբարբիտուրային թթվի լուծույթ: Խառնուրդը 10 րոպե տաքացրել ենք 100°C-ի պայմաններում: Քրոմոգենի վարդագույն երանգի ինտենսիվությունը, որը ուղիղ համեմատական է մալոնատդիալեհիդի կոնցենտրացիային, չափել ենք սպեկտրոֆուտոմետրով 535 նմ երկարության ալիքով: Դաշվարկերը կատարվել են հետևյալ բանաձևով՝

$$C = D/\Sigma 1$$


որտեղ՝  $D$  - սպեկտրոֆուտոմետրի ցուցանիշն է,  $\Sigma$  - մոլյար էքստրակցիայի գործակիցը, 1 - կյուվետի տվյալները:

Ստացված արդյունքների հավաստիությունը որոշելու համար կատարվել է տվյալների վիճակագրական մշակում Ստյուդենտ-Ֆիշերի տասնորդական վարիացիոն վիճակագրության մեթոդով [1]:


### **Հետազոտության արդյունքները և քննարկումը:**

Ինչպես ցույց են տալիս կատարված հետազոտությունների արդյունքները (գծ. 1, 2, 3), յարդի փորձարարական ցիրոզը ուղեկցվում է հետազոտվող հյուսվածքներում լիպիդների գերօքսիդացման պրոցեսի ակտիվացումով:

Մալոնատդիալեհիդի պարունակությունը կենդանիների ստուգիչ խմբի արյան մեջ, գլխուղեղի և յարդի հյուսվածքներում համապատասխանաբար կազմել է 5.5; 7.0 և 6.32 մմոլ/մգ սպիտակուցի հաշվով, իսկ  $\text{CCl}_4$ -ով մակածված ցիրոզի դեպքում՝ 9.24; 8.21 և 15.85 մմոլ/մգ: Ինչպես երևում է բերված տվյալներից, լիպիդների գերօքսիդացման ակնհայտ ակտիվացում դիտվում է յարդի հյուսվածքում: Դա կարելի է բացատրել նրանով, որ ցիրոզի դեպքում առաջին հերթին ախտահարվում է յարդը: Ավելի պակաս, համանման տեղաշարժ նկատվում է գլխուղեղում և արյան մեջ: Լյարդի ցիրոզի դեպքում հետազոտված հյուսվածքներում լիպիդների գերօքսիդացման խթանումը հետևանք է ֆոսֆոլիպիդ-գլցերիդների դեացիլացման ռեակցիաների ակտիվացման և, գլխավորապես, ֆոսֆատիդի խոլինի, որը հանգեցնում է լիզոֆոսֆատիդի խոլինի և չերթերի-ֆիկացված ճարպաթթուների, պոլիենային շարքի հիդրօքսիդների մոնո-, դի- և տրիենային կոնյուգանտների, Շաֆքա տիպի միացությունների և այդ բազմափուլային պրոցեսի վերջնական արգասիքի՝ մալոնատդիալեհիդի առաջացման:




Գծ. 1.  $\alpha$ -Տոկոֆերոլի և նատրիումի թիոսուլֆատի ազդեցությունը սպիտակ առնետների արյան լիպիդների գերօքսիդացման վրա  $CCl_4$ -ով մակածված լյարդի ցիօռօղի դեպքում (նմոլ մալոնատողալդեհիդ / մգ սպիտակուցին)



Գծ. 2.  $\alpha$ -Տոկոֆերոլի և նատրիումի թիոսուլֆատի ազդեցությունը սպիտակ առնետների գլխուղեղի լիպիդների լիպիդների գերօքսիդացման վրա  $CCl_4$ -ով մակածված լյարդի ցիօռօղի դեպքում (նմոլ մալոնատողալդեհիդ / մգ սպիտակուցին)  
/նշանակումները՝ գծ.1-ում/

Լիպիդային գերօքսիդները, լիզոֆոսֆատիդիլ խոլինը և չեսթերիֆիկացված ճարպաթթուները միասին հանդիսանում են լյարդի ցիռողի հիմնական ախտածին գործոնները:

$\alpha$ -Տոկոֆերոլի և նատրիումի թիոսուլֆատի ներորովայնային ներարկումը կարգավորում է պրո- և հակաօքսիդանտային համակարգերի ազդեցության դինամիկ հավասարկշուրջունը: Ստացված տվյալները հաստատում են այդ միացությունների կարևոր հակաօքսիդանտային դերը:  $\alpha$ -Տոկոֆերոլը և նատրիումի թիոսուլֆատը մոբլիզացնում են բջջի հակառադիկալային պաշտպանության էնդոքեն համակարգերի գործունեությունը փորձարարական ցիռողի դեպքում: Օրինակ, նատրիումի թիոսուլֆատի ներարկման դեպքում լիպիդների գերօքսիդացումը ճնշվում է (գ. 1, 2, 3) և փորձի արդյունքները մոտենում են նորմային:  $\alpha$ -Տոկոֆերոլի ներարկման դեպքում լիպիդների գերօքսիդացման ճնշումն ավելի ակնառու է:  $\alpha$ -Տոկոֆերոլի դրական ազդեցությունը լյարդի ցիռողի դեպքում պայմանավորված է օրգանիզմի պրո- և հակաօքսիդանտային համակարգերի վրա դրա ունեցած կարգավորիչ ներգործությամբ:



Գ. 3.  $\alpha$ -Տոկոֆերոլի և նատրիումի թիոսուլֆատի ազդեցությունը սպիտակ առնետների լյարդի լիպիդների գերօքսիդացման վրա  $CCl_4$ -ով մակածված լյարդի ցիռողի դեպքում (նոր մալենատիալդեհիդ / մգ սպիտակուցին) / նշանակումները՝ գ. 1-ում/

Այսպիսով  $CCl_4$ -ով մակածված լյարդի ցիռողի դեպքում դիտվում է լիպիդների գերօքսիդացման ակտիվացում սպիտակ առնետների արյան մեջ, լյարդի և գլխուղեղի հյուսվածքներում: Կենդանիներին հակաօքսիդանտային նյութերի՝  $\alpha$ -տոկոֆերոլի և նատրիումի թիոսուլֆատի ներորովայնային ներարկման դեպքում վերջիններս դրսնորում են պաշտպանիչ ազդեցություն, որը հանգեցնում է գերօքսիդների պարունակության նվազմանը ուսումնասիրված հյուսվածքներում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Бессмертный Б.С.** Математическая статистика в клинической, профилактической и экспериментальной медицине. // М. – 1967.
2. **Бурлакова Е.Б.** Роль липидов в передаче информации в клетке // В сб.: Биохимия липидов и их роль в обмене веществ. М.: Наука. – 1981. – С. 23-25.
3. **Владимиров Ю. А., Арчаков А. Я.** Перекисное окисление липидов в биологических мембранах // М.: Наука. – 1972. – 252 с.
4. **Фишер А.** Физиология и экспериментальная патология печени // Будапешт: изд. Академии наук Венгрии – 1961. – 216 с.
5. **Fields M., Lewis C. G** Biochemical effect of antioxidants on lipids and liver function in experimentally-induced liver damage // Ann. Clin. Biochem. – 1997. – V. 13. – P. 656-663.
6. **Halliwell B.** Antioxidant defence mechanisms: from the beginning to the end (of the beginning) // Free Radic. Res. – 1999. – V. 31, N 4. – P. 261-272.
7. **Li C.X., Li L., Lou J., Yang W.X., Lei T.W., Li Y.H., Liu J., Cheng M.L., Huang L.H.** The protective effects of traditional Chinese medicine prescription, han-dan-gan-le, on CCl<sub>4</sub>-induced liver fibrosis in rats // Am. J. Chin. Med. – 1998. – V. 26, N 3-4. – P. 325-332.

### СДВИГИ ПЕРЕКИСНОГО ОКИСЛЕНИЯ ЛИПИДОВ В ТКАНЯХ БЕЛЫХ КРЫС ПРИ ЭКСПЕРИМЕНТАЛЬНОМ ЦИРРОЗЕ ПЕЧЕНИ

*A. A. Симонян  
A. С. Маргарян  
Л. А. Симонян  
А. Т. Петросян*

Показана, что при CCl<sub>4</sub>-индуцированном циррозе печени в крови, мозге и печени белых крыс наблюдается повышение уровня свободнорадикального окисления липидов. Инъекция антиоксидантных факторов -  $\alpha$ -токоферола и тиосульфата натрия проявляет протекторный эффект, что выявляется нормализацией уровня перекисного окисления липидов в исследованных тканях.

### SHIFTS OF LIPID PEROXIDATION IN WHITE RATS TISSUES DURING LIVER EXPERIMENTAL CIRRHOSIS

*A. A. Simonyan  
A. S. Margaryan  
L. A. Simonyan  
A. T. Petrosyan*

It was shown that level of lipid freeradical oxidation was enhanced during the experimental cirrhosis induced by CCl<sub>4</sub> in white rat blood, brain and liver. The injection of antioxidant factors:  $\alpha$ -tocopherol and sodium thiosulfate developed a protective effect which leads to the normalization of lipid peroxidation level of investigated tissues.